

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԳՐԵՐԻ ՈՒՂԻՆ ՊԱԼԵՈԼԻԹԻՑ ՄԻՆԶԵԻ ՄԻՋՆԱԴԱՐ

(«ԱՐՄԱ» ՆՇԱՆԱԳԻՐ)

Համլետ Մարտիրոսյան


Նախորդ աշխատանքում կատարած հետազոտությունների արդյունքում պարզել ենք, որ Սյունիքի ժայռապատկերները վանկա-գաղափարագիր գրային համակարգ է, որը ստեղծվել է վերին հին քարի դարում (40-13 հազար տարի առաջ):¹ Սյունիքի ժայռափոր նշանագրերը ժամանակակից տիպի (կրոմոնյան) մարդու հետ տարածվել են արևմտյան Եվրոպայից մինչև հարավային Սիբիր, Եգիպտոսից մինչև Հնդկական թերակղզի: Ելնելով համանունության սկզբունքից, նաև պարզել ենք, որ Սյունիքի ժայռափոր նշանագրերի գաղափարագրման լեզուն հայերենն է:

Սույն աշխատանքում խնդիր է դրված մի նշանագրի օրինակով ցույց տալ Սյունիքի նշանագրերի տարածման ուղիները և նրանց անընդհատ գործածությունը Հայաստանի տարածքում վերին քարի դարից մինչև մեր օրերը: Հետազոտման համար վերցրել ենք մի նշանագիր, որի միջոցով գաղափարագրվել է Լուսնի Աստվածուհու անունը:

Ընթերցողին միգուցե անձանոթ է «արմա» բառը, որովհետև մաշտոցյան տառերով վկայված նման բառ չկա ոչ մատյաններում, ոչ բառարաններում: Սակայն փաստերը վկայում են, որ եղել է և մենք պիտի փորձենք հիմնավորել հայերենում այս բառի նախամաշտոցյան գոյություն: Դրա համար պիտի դիմենք միջնադարյան հայկական նշանագրերի՝ Նշանագիրք իմաստնոցի օգնությանը:

Սյունիքի ժայռապատկերներում հաճախ է հանդիպում արմունկի սխեմատիկ պատկերներ կայացնող նշանագիր (<), որին վերագրվում է «ար/արմ» ընթերցումներ («արմունկ» բառի արմատը): Այս առարկայական նշանագրի միջոցով հնարավոր է գաղափարագրել վերացական իմաստ արտահայտող արմ = «ազգ, ցեղ, տոհմ» բառը: Իսկ

«արմունկ» և «մի, մեն, մին» (𐀀) նշանագրերի կցագրությամբ (𐀀𐀁, 𐀀𐀂, 𐀀𐀃, 𐀀𐀄, 𐀀𐀅, 𐀀𐀆, 𐀀𐀇) գաղափարագրվում է Արմեն/Արմին դիցանունը: Մեր ձեռքի տակ եղած Սյունիքի ժայռապատկերների նմուշներում այս կցագրությունը հանդես է գալիս մոտ 100 անգամ (տես նկար 1):



Նկար 1. «Արմունկ» և «մին» նշանագրերի կցագրության նմուշներ:

¹ . Հ. Մարտիրոսյան, Հայկական ժայռապատկերների և հին աշխարհի գրային համակարգերի ծագումնաբանական առնչությունները, Բազմավեպ, 2008, էջ 198-247

Միջնադարյան մատյանները վկայում են, որ դրանից զատ, արմ = «ազգ, ցեղ, տոհմ» բառը գաղափարագրվել է նաև Լուսնի մահիկի պատկերով (☾ = «ազգ, ցեղ, տոհմ»):² Փաստորեն զծագրությամբ իրար շատ մոտ այս երկու նշանագրերին տրվել է նույն ընթերցումը: Հայագետների համար սա մի գանձ է, որը պահպանել են հայ մատենագիրները:³

Գրավոր վկայված այս փաստից բխում է մի կարևոր եզրակացություն. Լուսնի մահիկի պատկերով արմ = «ազգ, ցեղ, տոհմ» բառը գաղափարագրելու համար անհրաժեշտ է, որպեսզի Լուսնի անվանումը հայերենում համանուն լինի արմ = «ազգ, ցեղ, տոհմ» բառին: Մրանից էլ բխում է, որ հայերենում գոյություն է ունեցել «արմ-» արմատով կազմված Լուսնի մահիկի անվանում:

Ճիշտ մեր փնտրած անվանումը հայտնի է խեթերենում. arma = Լուսին: Աճող Լուսնի մահիկին խեթերն անվանում էին armanni: Ըստ լեզվաբանների, խեթերեն armanni անվանումը կազմված է arma = Լուսին և -anni նվազական («փոքրիկ») մասնիկից⁴ և փաստորեն համապատասխանում է հայերեն «ման(-ուկ)» բառին:⁵ Որպեսզի որոշենք, թե ով ումից է այս անվանումը փոխառել, պիտի տեսնենք, թե որ լեզվում է այն հիմնավոր ստուգաբանվում, բացատրվում. խեթերենում, թե՞ հայերենում:

Դրա համար նախ փորձենք «արմա» բառի հետքերը գտնել ավելի հին ժամանակներում և միաժամանակ փորձենք պարզել «արմա» բառի նախնական իմաստը, որով այն դարձել է Լուսնի անվանում: Խեթերենն այս հարցի ստույգ պատասխանը չի տալիս:

Լեզվաբանները խեթերեն arma = Լուսին բառը ծագեցում են irmala = «հիվանդ» բառից և զուգահեռաբար հիշատակում հին հնդկերեն árma = «ավերակներ», գերմաներեն arma = «հիվանդ» բառերը.⁶ Իմա՝ Լուսնի փուլերի փոփոխությունները կապում են «հիվանդ, տկար» գաղափարների հետ, ինչը, գոնե դիցաբանության տեսանկյունից, անհեթեթություն է և հետևանք ձևական մոտեցման:

Հին դիցաբաններում Լուսինը եղել է Մայր Աստվածուհու մարմնավորումը, պտղաբերության, կյանքի վերանորոգման, սնուցման ու խնամքի խորհրդանիշը: Մայր

² . Ն. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1984, տես «Ցուցակ հայկական հին նշանագրերը» հավելվածը;

Ստ. Մելիք-Բախշյան, Հայկական նշանագրություն, Երևան, 1987

³ . Միայն արաբական և մոնղոլ-թաթարական արշավանքների ժամանակ Հայաստանում հրի են մատնվել հարյուր հազարից ավել մատյաններ՝ ջնջելով հայոց պատմության ու մշակույթի շատ ու շատ արժեքավոր տվյալներ:

⁴ . O. Lauffenburger, Hittite Grammar, 2008, p. 22,


(http://www.premiumwanadoo.com/cuneiform.languages/hittite_grammar.pdf)

⁵ . Խեթերենում կա ma-an-ni բառ, որի իմաստն անհայտ է: Այս բառի գործածության օրինակները թույլ են տալիս ենթադրել, որ այն ունի «մանուկ, փոքրիկ» իմաստ (օրինակ՝ IGI-andazaš kan šarḫiyat ma-an-ni-iš SAL-iš(?) SAL.ŠĀ.ZU; KUB 44.4 rev. 27 + KBo 13.241 rev. 15):

⁶ . В. Иванов, Арма, Мифы народов мира, т. 1, Москва, 1991, ст. 104

Աստվածուհու վերաբերյալ այս պատկերացումն արդեն ձևավորված էր վերին քարի դարում և այդ ժամանակաշրջանի քարե արձանիկների վրա նա պատկերված է հենց որպես սնուցող մայր՝ փարթամ կրծքերով և մարմնով:

Լոսելում (Laussel, հարավ արևմտյան Ֆրանսիա, Դորդոնի մարզ) հայտնաբերված վերին քարե դարի բարձրաքանդակի վրա ի հավելումն հիշյալ բնութագրերի, Մայր աստվածուհու աջ ձեռքում պատկերված է կովի եղջյուր (տես նկար 2): Այս եղջյուրը նախ խորհրդանշում է Լուսնի մահիկը⁷ և ապա, սնուցման այն ակունքը, որից կերակրվում են բոլորը: Հետագայում այն պիտի անվանվի «լիության, առատության եղջյուր»:⁸ Ինչպես երկրային մայրն է ծնելուց հետո սնուցում, կերակրում, խնամում իր զավակներին, նույն կերպ Երկնային Մորը պիտի վերագրվեին իրենից ծնվածներին (մարդիկ, կենդանիներ, բույսեր) սնուցելու, խնամելու հոգսը: Ելնելով վերը շարադրվածից, կարծում ենք Լուսնի Արմա (գրաբարյան ուղղագրությամբ Արմայ) անվանումն արտահայտում է Մայր Աստվածուհու սնուցող, կերակրող ֆունկցիան, ինչը հաստատվում է հայերենի տվյալներով:



Նկար 2. Լոսելում հայտնաբերված Մայր Աստվածուհու բարձրաքանդակը:

Հայերենում «արմ» արմատով են կազմված.

արմատ = «բույսի այն մասը, որով հողից սնունդ է ստանում»,


արմտիք = «բույսերի սերմեր, որոնք իբրև կերակուր են ծառայում մարդկանց և անասուններին, ընդդեմ, ինչպես ցորեն, գարի, ոսպ, ոլոռ և այլն»,

արման = «խոշոր աղացած ալյուր»,

արմայ = «խոշոր աղացած ալյուր»:

⁷ . Եղջյուրի վրա քաշված են թվով 13 խազեր: Որոշ գիտնականներ կարծիք են հայտնել, թե այդ թիվը խորհրդանշում է լուսնային 13 ամիսները կամ տարվա ընթացքում կանաց 13 դաշտանային ցիկլերի թիվը (տես՝ A. Marshack, , The Roots of Civilization, New York, 1991):

⁸ . Մարդկության ամենահին ամանը, որի մեջ լցրել են, որով լցրել են կամ չափել ու բաժին են հանել, եղել է սնամեջ եղջյուրը: Շատ ժողովուրդների բանահյուսության մեջ է պահպանվել սնուցող, կերակրող եղջյուրի գաղափարը: Դրանցից հանրահայտը թերևս մանուկ Ջեսին իր եղջյուրով սնուցած Ամալթեա այծի առասպելն է: Այծի Ամալթեա անունը բարդված է «ամալ» և թեա = «աստվածուհի» մասերից: Անվան առաջին՝ «ամալ» մասը հունարենում չունի բացատրություն: Դա բնիկ հայերեն ամալ = «լցնել» բառն է, որից է նաև աման = «անօթ» բառը, որը շատ հնարավոր է նախապես ունեցել է «եղջյուր» իմաստ: Հետևաբար հայերենի օգնությամբ բացատրվում է Ամալթեա անվան «լիության, առատության աստվածուհի» իմաստը, իսկ վերը բերված փաստերը, այդ թվում Լոսելի արձանիկը, վկայում են որ այդ անվան կրողը եղել է Մայր Աստվածուհուն մարմնավորող Լուսինը:

Հայերեն «ամալ» բառի հնությունը վկայում է շումերերը, որում  = Ama ⁴Inanna = Մայր Ինաննա արտահայտությունը մեկնվում է amalu բառով (աքքադերեն a-ma-la-tum), որի իմաստը շումերագետների համար անհայտ է: Հայերենն է փաստում, որ Մայր Ինաննայի այդ մականունը նշանակում է Ամալող = «լցնող; լիություն, առատություն պարզևող»:


Այսպիսով հայերենը «արմ» արմատի համար տալիս է մի նոր՝ «կերակուր, սնունդ» իմաստ, որի հնության մասին խոսում են հենց բերված բառերի իմաստները: Օրինակ՝ արմայ/արման =«խոշոր աղացած ալյուր» բառը պիտի ծնվեր այն ժամանակներում, երբ արմ(տիքը) (ցորենը, գարին, ոլոռը, ոսպը և այլն) ծեծելով կամ առաջին աղորիքներով մանրացնելով ստանում էին խոշորահատիկ ալյուր: Հացահատիկի մշակման այս մեթոդները ևս առաջացել են վերին հին քարի դարում:

Արդյունքում կարող ենք փաստել, որ Լուսնի Արմա/Արմայ անվանումը, որպես Մայր Աստվածուհու մի այլ անուն, նրան ներկայացնում է որպես սնուցող, կերակրող մայր: Քանի որ այս բացատրությունը տալիս է հայերենը, ապա խեթերեն արմ անվանումը պիտի համարել փոխառություն հայերենից: Դրա մասին է վկայում և այն փաստը, որ Ք.ա. III-I հազարամյակների սեպագիր բոլոր լեզուներում, այդ թվում խեթերենում, Լուսնի Աստծո անունը գաղափարագրվում էր «SIN (Աստված SIN) ձևով: Գրության այս ձևը վկայված է դիցանունների շումերական հնագույն ցուցակներում (Ք.ա. III հազ. սկիզբ): Այս պարագայում ևս դիցանվան ստուգաբանությունը հնարավոր է տալ միայն հայերենի միջոցով:

Բնիկ հայերեն «սին» բառն իր սան/սուն ձայնադարձների հետ միասին ունի «սնուցել, կերակրել, մեծացնել» իմաստ: Սրանից է սնունդ =«ուտելիք, կերակուր» բառը, որի երկրորդ՝ «ունդ» բաղադրիչն ունի «ուտելի սերմ, հացահատիկ» իմաստ: Հետևաբար «սնունդ» բառը տառացի նշանակում է «ուտելի սերմեր» և իր իմաստով նույնանում է «արմ» արմատից ծագած «արմտիք» բառի հետ: Այս պարագայում բնական է, որ Լուսինը անվանվել է և Արմա, և Սին, քանի որ վերջիններս հոմանիշներ են հայերենում:

Ինչպես վերը նշեցինք, Լուսնի Աստծո անվան «SIN գրելաձևը մեծ տարածում ուներ հին աշխարհում և գործածվել է շումերական ժամանակներից մինչև Ուրարտու և մինչև սեպագրության մայրամուտը: Այս SIN միավանկ բառը, որպես Լուսնի անվանում «սնուցող, կերակրող» իմաստով, անշուշտ սեպագրության մեջ չի ծագել, այլ գալիս է պատկերագրությունից: Հայտնի է նաև, որ Լուսնի անվանումը պատկերագրվել է երկու հիմնական ձևերով. մահիկ - որպես աճող և նվազող Լուսնի պատկերները և շրջան - որպես լիալուսնի պատկեր: Հետևաբար պիտի լիներ մի լրացուցիչ ու միջանկյալ գաղափար, որը հնարավորություն տար Լուսնի մահիկի պատկերն ընթերցել Սին =«սնուցող, կերակրող»: Կարծում ենք այդ հնարավորությունը տալիս է հայերեն սին =«մեջը փուչ, դատարկ» բառը, որը, նախ համանուն է սին =«սնուցող, կերակրող» բառին և երկրորդ՝ այն կիրառման տեսանկյունից սնամեջ եղջյուրի հիմնական հատկությունը՝ տարողունակությունն արտահայտող բառն է: Իսկ այս ամենից բխում է, որ կարող ենք եղջյուրի պատկերով, իմա՝ Լուսնի մահիկով, հնչեցնել սին =«մեջը փուչ, դատարկ; եղջյուր» և հասկանալ սին =«սնուցող,


կերակրող»: Հեց այս սին =«սնուցող, կերակրող» և սին =«մեջը փուչ, դատարկ; եղջուր» բառերի համանունությունն են օգտագործել նաև Լուսելի Մայր Աստվածուհու արձանիկը փորագրողները: Նրանք եղջուրի պատկերով գաղափարագրել են սին =«սնուցող, կերակրող» բառը, իսկ փարթամ կնոջ պատկերով՝ «մայր» բառը և երկուսը միասին հնչեցրել են Մնուցող Մայր արտահայտությունը: Այս հնարավորությունն ընձեռնում է հայերենը և սպասելի է, որ նույն գաղափարը պիտի արտահայտված լինի նաև Սյունիքի ժայռապատկերներում:

Սակայն մինչ Սյունիքի ժայռապատկերներում եղջուրի և Լուսնի մահիկի հետաքրքիր կապին անդրադառնալը, խոսենք շումերական պատկերագրության մի հանելուկի մասին: Եղջուրի մասին վերն ասվածից ընթերցողը կարող է ակամա եզրակացնել, թե sin բառը շումերենում գաղափարագրվել է եղջուրի պատկերով, ինչն այդպես չէ: Այն գրվել է 30 թվի գաղափարագրով, որի սեպագիր տարբերակը բաղկացած է երեք սեպերից (𒊩 = ušus կամ eš = 30): Անշուշտ շումերները գիտեին և գործածում էին 30 օրերից կազմված լուսնային ամիսը, սակայն այդ գաղափարը նրանք արտահայտում էին  = UDXEŠ = iti, itu, itud = «ամիս, լուսին» բառով, որի գաղափարագիր ընթերցումը տառացի նշանակում է «30 օր»: Գրության այս ձևին կանդրադառնանք քիչ անց, իսկ հիմա վերադառնանք այն հարցին, թե ինչ հիմքի վրա են շումերները sin = սին =«սնուցել» բառը գրել 30 թվի գաղափարագրով:


Նման հնարավորություն նորից ընձեռնում է միայն հայերենը: Գրաբարյան «երեսուն» և բարբառային «յեռսուն» (Վան), «երսուն» (Սուչավա, Հաճն), «ըրէ՛սուն» (Ղարաբաղ), «արասուն» (Ագուլիս, Ջուղա), «յարսուն» (Թիֆլիս), «առսուն» (Խարբերդ, Սեբաստիա) և այլն ձևերը մասնատում ենք եր-/յեռ-/ըր-/ար-/եր-/յար-/առ- =«երեք» և -սուն =«տասը» մասերի: Դրանցից 3 թվի անվանումն արտահայտող բաղադրիչները հայերենում համանուն են ար =«անել, կատարել» արմատին, իսկ 10 թվի «սուն» անվանումը համանուն է սին =«սնուցել» բառի «սուն» ձայնադարձին: Հետևաբար հայերեն լեզվամտածողություն ունեցող մարդը 30 թվի նշանով կարող է գաղափարագրել սուն/սան/սին =«սնուցել» բառը:⁹

Վերադառնանք մեր բուն խնդրին և տեսնենք, թե Սյունիքի ժայռապատկերներում ինչպես է կազմակերպվել եղջուրի պատկերով Լուսնի անվան գաղափարագրումը: Նախ

⁹ . Այս պարագայում հաշվի է առնվում նաև այն փաստը, որ թվերի համար նշանները ստեղծվել էին մինչ պատկերագրության ծագումը: Շումերական պատկերագրության մեջ 30 թվի պատկերագիրը կազմված էր երեք շրջանակներից, որոնցից յուրաքանչյուրին վերագրվում էր 10 թվի արժեք: Ստորև ցույց է տրված շրջանակի պատկերից սեպերին անցնելու փուլերը:



նշենք, որ ինչպես Լոսելի արձանիկի վրա, Լուսնի մահիկը երբեմն եղջյուրի տեսքով էր պատկերվում և միջագետքյան կնիքների վրա (☾, ☽) և Սյունիքի ժայռապատկերներում (☾): Մակայն Սյունիքի ժայռապատկերները Լուսնի մահիկի դասական, բնական պատկերագրությանը զուգահեռ ցուցադրում են մի առանձնահատկություն, որն այլուր նման ձևով չի արտահայտվում: Խոսքը վերաբերում է այժ եղջյուրների միջոցով Լուսնի մահիկի պատկերագրությանը: Եթե ցուլի/կովի եղջյուրների միջոցով մահիկի պատկերագրությունը տարածված էր Շումերում, Եգիպտոսում ու Էլամում, ապա Սյունիքի ժայռապատկերներում դրա համեմատ ավելի տարածված է այժի եղջյուրներով մահիկի պատկերագրությունը (տես նկար 3):



Նկար 3. Լուսնի մահիկի պատկերագրությունն այժի եղջյուրների միջոցով:

Ինչպես երևում է նկար 3-ում բերված օրինակներից, այժի եղջյուրների ծայրերն իրար միացնելով, փորագրողը ստացել է մահիկի պատկեր և այժին դարձրել միեղջյուրանի, միաժամանակ շեշտելով, որ այդ եղջյուրի ներսը դատարկ՝ սին է: Գործածության առումով եղջյուրի այս կարևոր առանձնահատկությունը բնութագրող բառը (սին) դարձել է եղջյուրի անվանումներից մեկը: Դրա մասին են վկայում նաև շումերենի տվյալները: Շումերենում եղջյուր բառն ունի si ընթերցում, որը նույնական է հայերեն «սին» բառի հետ (գրավոր շումերենում բառավերջի ռնգային հնչյունները հաճախ չեն արտահայտվել): Շումերեն si բառի մյուս իմաստն է «ջուր հավաքել, պահել», որն անշուշտ գալիս է եղջյուրի si = սին = «մեջը փուչ, դատարկ» հատկությունից:

Ակնհայտ է, որ Սյունիքի ժայռապատկերները փորագրողներն այժի եղջյուրներին Լուսնի մահիկի տեսք տալով որոշակի նպատակ են հետապնդել: Վերը շարադրածից բխում է, որ նրանց նպատակը Մայր Աստվածուհուն մարմնավորող Լուսնի Սին = «սնուցող, կերակրող» մականվան գաղափարագրումն է: Ընդունելով այս թեզը և այժի եղջյուրներով պատկերված մահիկն ընթերցելով Սին, իսկ բուն այժի պատկերը՝ էժե = «մեծ մայր» կամ դիք = «աստված» (որպես այժի «էժ» և «դիգ» անվանումներին համանուններ), ապա այժի ամբողջական պատկերի համար ստանում ենք Սին Էժե = Սնուցող Մեծ Մայր կամ՝ Սին Դիք = Սնուցող Աստվածուհի՝ ըստ էության նույնական իմաստները: Այլ կերպ ասած, նմանատիպ այժապատկերների միջոցով Սյունիքում գաղափարագրվել է նույն իմաստը, ինչ և Լոսելի Մայր Աստվածուհու արձանիկի դեպքում էր:


Այծապատկերների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այծերի եղջյուրների գծագրման տարբեր ձևերը ոչ թե փորագրողի գեղարվեստական ճաշակի կամ սոսկ երևակայության արդյունք են, այլ գաղափարագրում ու արտահայտում են որոշակի բառ ու իմաստ: Այդ փաստը ցայտուն նկատվում է այծերի խմբակային պատկերներում (տես նկար 4):



Նկար 4. Այծերի խմբակային պատկերներ Սյունիքի ժայռապատկերներում:

Ինչպես երևում է նկար 4-ում բերված օրինակներից, նույն ժայռապատկերում փորագրված չորս-հինգ այծերի եղջյուրները տարբեր են միմիանցից և այդ ձևերից յուրաքանչյուրը հանդես գալով որպես առանձին նշանագիր, կողք-կողքի պատկերված այծերին տալիս են տարբեր գաղափարագիր իմաստներ: Արդյունքում այծի պատկերը դառնում է երկու բառից կազմված գաղափարագիր գրություն (եղջյուրներով կազմված նշանագիր + այծ): Դրա մի օրինակը մահիկ պատկերող եղջյուրներն են, որի մասին խոսեցինք վերը: Նաև տեսանք, որ Լուսնի մահիկի Արմա և Սին անվանումները հայերենում հոմանիշներ են և կրում են «սնուցող, կերակրող» իմաստ: Այս պարագայում հարց է ծագում, թե Սյունիքի ժայռապատկերներում ինչպես է կազմվել Արմա անվան գաղափարագիր գրությունը և տարբերակվել հոմանիշ Սին անվան գրությունից:

Արդեն գիտենք, որ հայերենում «արմ» արմատով սկսվող բառերից միայն «արմուկ» բառն է, որ ներկայացնում է պարզ առարկայական պատկեր (արմունկ), որը կարելի է օգտագործել «արմ» արմատով սկսվող և վերացական իմաստներ կրող բառերի գաղափարագրման նշանագիր: Այդ բառերի թվին է պատկանում արմա =«սնունդ, կերակուր» բառը: Այդ իսկ պատճառով, ժայռապատկերներ փորագրողները այծի գույգ եղջյուրների սովել են նաև արմունկի տեսք, որպեսզի հնչեցնեն Լուսնի մահիկի Արմա անվանումը (տես՝ նկար 5, առաջին շարք):



Նկար 5. Լուսնի Արմա =«սնուցող, կերակրող» անվանման և արմ =«ազգ, ցեղ, տոհմ» բառի գաղափարագրումը այծի եղջյուրներից կազմած «արմ» նշանագրի միջոցով:

Նկար 5-ի առաջին շարքի պատկերներում «արմ» նշանագիրը կազմված է այծի գույգ եղջյուրներով: Այդ ճանապարհով նշանագրի պատկերը մի կողմից նմանեցվում է Լուսնի մահիկին, իսկ մյուս կողմից, ինչպես Սին անվան գաղափարագրման դեպքում էր, շեշտվում է նրա սնամեջությունը՝ տարողություն ունեցող աման լինելը: Այս դեպքում եղջյուրներով կազմված «արմ» նշանագրի ընթերցումն է Արմա, իսկ այծի ամբողջական պատկերինը՝ Արմա Էծէ կամ Արմա Դիք, որոնք ունեն նույն իմաստները, ինչ և վերին Սին Էծէ և Սին Դիք ընթերցումներինը: Երկու դեպքում էլ իմաստները համապատասխանում են Անահիտ Աստվածուհու «կեցուցիչ» և «խնամակալութիւն» հասցնող բնութագրերին»:¹⁰

Նկար 5-ի երկրորդ շարքի պատկերներում «արմ» նշանագիրը կազմված է այծի մի եղջյուրով, ներկայացնում է բուն «արմուկ» նշանագիրը և հնչեցնում արմ = «ազգ, ցեղ, տոհմ» բառը: Այս դեպքում այծի ամբողջական պատկերն արդեն ունի զԱրմի Էծէ = Յեղի Մեծ Մայր կամ զԱրմի Դիք = Յեղի Աստվածուհի իմաստը:

Այս բոլոր փաստերը հաստատում են, որ Լուսնի Արմա/Արմայ անվանումը բնիկ հայերեն է, գալիս է Սյունիքի ժայռապատկերների փորագրման ժամանակներից և պարզվում է նաև, որ հայերենում նրա վկայվածության վերաբերյալ վերն արտահայտած մեր հոռետեսությունն այնքան էլ արդարացված չէ, որովհետև իրականում այն պահպանվել է առնվազն երեք հատուկ անունների մեջ.

Արմայիս/Արամայիս - Հայկի թոռը, Արմենակի որդին (ըստ Մովսես Խորենացու),

Արմալիր/Արմայիր - Արմայիսի կառուցած քաղաքը,

Հարմա - Արմայիսի ծոռը:

Արմայիս և Արմալիր/Արմայիր անունները դիցաբանական կազմություն ունեն ու ակնհայտ է, որ այս անվանումների հիմքում Լուսնի Աստվածուհու Արմա/Արմայ անունն է: Այս անունները, ըստ Մովսես Խորենացու վկայության, գալիս են հայ ժողովրդի կազմավորման ժամանակներից, քանի որ Արմայիսը հայոց անվանադիր նահապետ Հայկի թոռն է: Արմայիս անձնանունը կազմված է Արմա/Արմայ դիցանունից, ես/իս = «լինել» էական բայից և նշանակում է Արմայից եղած: Արմալիր քաղաքանունը (ւ>յ լծորդմամբ նաև Արմայիր) նույնպես կազմված է Արմա դիցանունից: Ինչ վերաբերում է լիր/յիր մասին, ապա այն հնարավոր է բացատրել երկու ձևով.

ա. վայր/վեր/վիր = «տեղ» իմաստը կրող բառն է և Արմավիր անվանումը նշանակում է «Արմայի (պաշտամունքի) տեղ»:¹¹

¹⁰ . Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, 53; 127

¹¹ . Արմավիր անվանն այս նույն իմաստն է վերագրում նաև Մ. Գավուքչյանը, սակայն լիր/յիր մասը բացատրում է շուներեն սրս = «քաղաք» բառով, իսկ Արմա-ն մեկնում է «արածին» (Մ. Գավուքչյան, Արմեն և հայ անունների ծագումը և Ուրարտուն, Պեյրուք, 1973, էջ 220):

բ. Արմավիր անվան լիր/յիր մասը կրում է «աստված» իմաստ և «Արմավիր քաղաք» նշանակում է «Արմա Աստվածուհու քաղաք»:

Այս երկրորդ մեկնության պարագայում մեզ համար հիմք է ծառայում բնիկ հայերեն վեր =«ավելի բարձր, վերևը, վերի ծայրը» բառը, որի հնչյունափոխված ձևն է գեր =«(ամենա)բարձր, վեր, ավելի քան» բառը (վ > գ, հմտ. արև > արեգ, կով > կոզի և այլն): «Բարձր» իմաստ կրող բառերը փոխաբերաբար կրում են նաև «աստված» իմաստ (օրինակ՝ «բարձր» և «բարձրեալ», ել =«վեր բարձրանալ» և սրանից ծագած՝ el3, ilu =«աստված» (շումերեն), el =«աստված», Eloha =Աստված (եբրայերեն), Allah = Աստված (արաբերեն), ἄλιος = «վեր բարձրացող, ծագող =արեգակ» և «արեգակի Աստված» (հունարեն) և այլն):

Հայերենում գրավոր վկայված է գերուհի =«աստվածուհի» բառը, որի «գեր» արմատը Հ. Աճառյանն իրավացիորեն կցում է գեր =«(ամենա)բարձր, վեր, ավելի քան» բառին:¹² Քանի որ «վեր» բառը նույնական է «գեր»-ի հետ, ապա կարող ենք ենթադրել, որ «վեր» բառը ևս պիտի գործածվեր «աստված» իմաստով: Արմավիր/Արմայիր անվան լիր/յիր մասն էլ նույնական է «վեր» բառի բարբառային «վիր, վեր, յեր» ձևերի հետ:

Ասվածի մասին կարևոր վկայություններ ենք գտնում նաև շումերենում: Նախ տեսնենք, թե Միջագետքի հարթավայրերում ապրող շումերներն ինչ էին հասկանում «վեր բարձրանալ» հասկացության տակ, որը գրվում էր հետևյալ երկու ձևերով. DU6.DU և UDxEŠ.DU: Շումերեն այս բառերի քննությունը թեև մեզ մի փոքր կշեղի, սակայն արդյունքները մեզ կօգնեն բուն նյութն ընկալելու գործում:

$DU_6.DU = \text{𒅗𒅘}$ = «վեր բարձրանալ»

Առաջին՝ $DU_6 = \text{𒅗}$ սեպն ունի «բլուր» (աքքադ. tīlu) և «Աստծո գահի պատվանդան» (աքքադ. di'u) իմաստներ և հնչողությամբ ու իմաստով նույնական է հայերեն դուին =«բլուր» բառի և Դուին բնակավայրի անվան հետ: Շումերական սեպի պատկերագիրը ճառագայթող բլուր է (𒅗): Եզիպտերենում սրանց զուգահեռն է Dw =«լեռ, բլուր», որի հիերոգլիֆն ունի հենց երկգագաթ լեռան տեսք (𓄏): Երկրորդ՝ $DU = \text{𒅗𒅘}$ սեպի հիմնական իմաստն է «գնալ», իսկ պատկերագիրը՝ ոտք: «Գնալ» իմաստի համար այս սեպն ունի մի քանի հնչյունական արժեքներ, որոնցից յուրաքանչյուրը հայերենում ունի իր զուգահեռը.

gen, gen, gin, kin₇ = գնալ (բարբառներում՝ գինել, քինալ, քինիլ);


er₁₀, re₆ = երթալ, էրթալ;


du = դուարել =«հետևիլ»



men₃ = ման =«ման գալ, քայլել, զբոսնել»:

¹² . Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, տես «գեր» բառահոդվածը:

Արդյունքում, DU₆.DU = «վեր բարձրանալ» կապակցությունը տառացի նշանակում է «գնալ բլուր, բլուր բարձրանալ», վանկագրվում է e-lu-u, e-lu-u₂, ընթերցվում elū, որը բնիկ հայերեն էլ = «վեր բարձրանալ» արմատն է:

UDx₆EŠ.DU =  = «վեր բարձրանալ»


Մա  = UDx₆EŠ = iti, itu, itud = «ամիս, լուսին» և DU = «գնալ» բառերից կազմված կապակցություն է և տառացի նշանակում է «Լուսին գնալ», որի պատկերագիրը DU₆=«բլուր; Աստծո գահի պատվանդան» բառի պատկերագիրն է (ճառագայթող բլուր), բայց արդեն

Լուսնի մահիկի վրա ( , ):¹³ Այժմ փորձենք պարզել, թե այս ինչ խորհրդավոր լեռ/բլուր է, որը միաժամանակ Աստծո գահի պատվանդան է և վեր բարձրանալու գաղափարի կրողը:

Հանրահայտ է, որ հնում տարածված էր այն պատկերացումը, թե աստվածները բնակվում են լեռնագագաթներին և նրանց հետ հաղորդակցությունը այնտեղ է տեղի ունենում: Դա հետևանք էր այն իրողության, որ մարդու աշխարհընկալումային համակարգում «աստված» գաղափարը կապված էր «բարձր» գաղափարի հետ, իսկ լեռնագագաթները՝ Երկրի ամենաբարձր և Երկնքին ամենամոտ կետերն են: Ինչպես այս պատկերացումները, այնպես էլ դիցական լեռների նկարագրերը, իրենց հետ հարթավայրային Միջագետք ու Նեղոսի հովիտ էին տարել լեռնաբնակ մի ժողովուրդ, ով և ստեղծեց ապագա շումերական ու եգիպտական քաղաքակրթությունները:

Իրենց նոր բնակության վայրերում նրանք պատեհ ժամանակին, որպես իրենց աստվածների նոր բնակավայրեր, կառուցեցին արհեստական լեռներ: Դրանք աստիճանաձև բուրգերն են, որոնց շումերական տարբերակն աշխարհին այսօր հայտնի է աքքադերեն զիկուրատ (ziggurat) անվամբ: Զիկուրատի հարթ գագաթին կառուցվում էր Աստծո տունը՝ տաճարը: Միջագետքում զիկուրատների կառուցումը շումերական ժամանակներից հասնում է մինչև Բաբելոնի անկումը (Ք.ա. III հազ. ÷ VI դ.): Դրանցից առավել հայտնին Ուր քաղաքի զիկուրատն էր, Լուսնի Աստծուն նվիրված տաճարով:

¹³ . Շումերեն գրության երկու ձևերն էլ (DU₆.DU և UDx₆EŠ.DU) «վեր բարձրանալ» իմաստից զատ ունեն այլ իմաստներ, որոնք համանուններ են նաև հայերենում և կազմված են «վեր/վիր» արմատից. «ավերել, երկրի երեսից ջնջել» = վեր(ացնել), «քերծել, ճանկոել» = վեր(ք), «կատաղի, վայրենի» = վիր(ու):



Նկար 6. ա) Ուրի շումերական III դինաստիայի հիմնադիր Ուր-Էնգուրի (Ք.ա. 2112-2095թթ, ըստ միջին ժամանակագրության) կառուցած զիկուրատը, որի գագաթին Լուսնի տաճարն էր: բ) Նույն զիկուրատը նեո-բաբելոնյան կայսրության վերջին թագավոր Նաբոնիդուսի (Ք.ա. 556-539թթ) վերակառուցումից հետո: ¹⁴ գ) Նույն զիկուրատը պեղումներից հետո:

Զիկուրատի շումերեն անվանումն է unir = u6-nir, իսկ շումերագետների կողմից ս6 ընթերցումը վերագրվում է IGI.E2 կցագրությանը, որը կրում է «արմանալ, զարմանալ» իմաստ: Այսինքն IGI.E2 կցագրությանը կարող ենք վերագրել arm/arma/arman ընթերցում, որպես «արմանալ» բառի արմատ: Այս պարագայում հետաքրքրություն շարժող փաստն այն է, որ շումերենում աստիճանաձև տաճարի՝ զիկուրատի անվանումը սկսվում է այս կցագրությամբ (տես աղյուսակ 1), իմա՝ arm/arma արմատով:




Աղյուսակ 1. Զիկուրատ բառի գրության ձևերը:

Շումերեն	Աքքադերեն	Սկզբնաղբյուրները
u6-nir	zi-qu2-ra-tum	(Sag A iv 41)
u6-nir	zi-ig-gur-ra-tum	(MBGT II 149)
u6-nir	ziq-qur-ra-tum	(Lu I (Excerpt II) 120)

Եթե u6-nir գրության մեջ u6-ի փոխարեն տեղադրենք arma ընթերցումը, ապա զիկուրատի անվանման համար կստանանք arma-nir տարբերակը, որը Արմավիր անունից տարբերվում է մի հնչյունով: Թեև հայերենում, մանավանդ բարբառներում, տարածված է ն>յ հնչյունափոխությունը¹⁵, որն ապահովաբար arma-nir-ը դարձնում է Արմայիր, սակայն անցնենք այդ տարբերակի վրայով և տեսնենք, թե ինչ հնարավորություն է ընձեռնում շումերենը: Շումերական այս սեպը nir ընթերցումից զատ ունի նաև ner, nur, nar3, nira ընթերցումներ և «բոլորից բարձր, վերին, տեր, տիրակալ, երևելի, բոլորին գերազանցող» իմաստներ: Ակնհայտ է, որ շումերեն nir/ner բառն իր իմաստներով նույնական է հայերեն վեր/գեր = «բարձր, բարձրագույն; աստված» և «տեր» բառերի հետ: Վեր/գեր և nir/ner բառերի հնչյունական համարժեքությունը ստուգելու համար տեսնենք թե ինչպես է վանկագրվում շումերեն բառը և տարընթերցումների ինչ հնարավորություններ ունի:

¹⁴ . Sir Leonard Woolley, Ur excavations, vol. V, The ziggurats and its surroundings, New York, 1939,
¹⁵ . Օրինակ, Խարբերդ-Դիարբեքիր տարածաշրջանի բարբառներում «մանր» բառը հնչեցվում է «մայր»:

Ըստ շումերական բառարանների, nir/ner բառը վանկագրվում է ni-ir և ne-er ձևերով:

Սրանցից ir և er վանկերը նույն սեպի ընթերցումներն են ( = ir, er), իսկ ni =  և ne =  սեպերը համապատասխանաբար ունեն նաև i3, be3, le2 և bi2, le9, ge9, te4 ընթերցումներ: Հետևաբար nir/ner բառերի համար կարող ենք կազմել հետևյալ լրացուցիչ ընթերցումները (տես աղյուսակ 2):

Աղյուսակ 2. nir/ner բառերի ընթերցման տարբերակները:


ni - ir	i3 - er/ir	ier/ir	յեր/յիր
	be3 - er	ber	վեր (b>v)
	le2 - er	ler	լեռ
ne - er	bi2 - ir	bir	վիր (b>v)
	le9 - er	ler	լեռ
	ge9 - er	ger	գեր
ne - er	te4 - er	ter	տեր

Արդյունքում, u6-nir = զիկուրատ բառի համար ստանում ենք arma-nir = arma-ir, arma-ber, arma-bir, arma-ger ընթերցումները, որոնք հնչյունական և իմաստային առումով ճշգրիտ համապատասխանում են հայերեն Արմաիր/Արմայիր անվանմանը:¹⁶ Անվանման «ւիր/յիր» բաղադրիչի իմաստի («աստված», «բարձր», «տեղ, վայր») ճշգրտման հարցում օգնում են շումերական տեքստերը:

Զիկուրատի շումերեն անվան առավել տարածված ձևն է E2-u6-nir, որտեղ E2 գաղափարագիրը «տուն, պալատ, տաճար» իմաստը կրող ցուցիչն է: Հետևաբար E2 գաղափարագրի իմաստը չկրկնելու համար անվանման nir = վեր/գեր մասին հարկ է վերագրել ոչ թե «տեղ, վայր», այլ՝ «բարձր, բարձրեալ, աստված» իմաստ: Շումերենի այս տվյալները հուշում են, որ Արմաիր/Արմայիր անվանումը գործածվել է «տուն» կամ «տաճար» որոշիչի հետ (Արմաիրի տուն, Արմաիրի տաճար): Հետագայում տաճարի շուրջը գոյացած բնակավայրն իրեն է վերցրել Արմաիր/Արմայիր անվանումը:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ nir/ner բառի «բարձր» իմաստի համար be3-er, bi2-ir, ge9-er = վեր/գեր ընթերցումներից զատ առկա է նաև le2-er, le9-er = լեռ ընթերցում, որը տալիս է շումերական զիկուրատների և եգիպտական բուրգերի էության բնորոշումը: Սրա հետ համահունչ է մյուս փաստը. շումերեն ner/nir բառի պատկերագիրը գույգ լեռների սխեմատիկ

¹⁶ . Շումերեն nir/ner բառի «բոլորից բարձր, վերին, տեր, տիրակալ, երևելի, բոլորին գերազանցող» իմաստների դիմաց հայերենը կարող է դնել երեց /իրից=«ավագ, մեծ», երևելի =«նշանավոր, հռչակավոր», երի/երա =«առաջին» բառերը: Մյուս կողմից, nir/ner բառն ունի նաև երնել, երնել =«ցորենը հարդից մաքրելու համար կալը քամուն տալ» իմաստ: Այս փաստերից ևս բխում է, որ nir/ner սեպը պիտի ունենա եր/իր/եր ընթերցում: Հետաքրքիր է, որ հայերենի որոշ բարբառներում երի =«առաջին; կենդանու առջևի ոտի վերի մասը» բառն ունի «ների» ձև:



պատկեր է, որոնցից յուրաքանչյուրի վրա ծառի սխեմատիկ պատկեր է (նկար 7ա): Սյունիքի ժայռապատկերներում ծառի նման սխեմատիկ պատկերը (տես նկար 7բ) կցագրվում է եղջերուի

պատկերներին, որն արտահայտում է եղևել = «վեր բարձրանալ; գոյանալ» իմաստը:

Ասվածի իսկությունը հաստատելու է գալիս Մովսես Խորենացու այն վկայությունը, թե «յԱրմավիր, որ ասի բլուր»:¹⁷ Այս փաստը վաղնջական ժամանակներից եկող դիցաբանական կապով իրար է միացնում Արարատյան դաշտավայրի հնագույն բնակավայրերը՝ Արմավիրը և Դվինը (Դուին =բլուր): Դվինը նույնքան հին է, որքան Արմավիրը. «Դվինի բլուրն իր շրջապատի համեմատությամբ ունի 30 մետր բարձրություն և Արարատյան դաշտի այդ մասի վրա հանդիսանում է աշխարհագրական ամենաբարձր կետը: Այդ է պատճառը, որ բլրի վրա մարդն ուշադրություն է դարձրել և բնակություն հաստատել դեռևս այն ժամանակ, երբ ընդհանրապես նոր էր նստակյաց դառնում»:¹⁸


Արհեստական լեռ ու լեռան գագաթին տաճար կառուցելու և այն Արմավիր կոչելու սովորույթն իր մեջ է առնում մի ամբողջական դիցա-աշխարհընկալումային համակարգ, որը Շումեր է մուտք գործում Ք.ա. V-IV հազարամյակներում: Այդ համակարգի մեջ էր մտնում բլուր-լեռը Աստծո գահի պատվանդան ընկալելը (հիշենք հայ. դուին, եգիպտ. Dw, շումեր. DU=«բլուր; աստծո գահի պատվանդան»): Հետևաբար պիտի կարծել, որ Հայաստանում Արմավիրը, որպես Լուսնի Արմա/Արմայ Աստվածուհու տուն, պիտի գոյություն ունենար և հռչակված լիներ Շումերում զիկուրատների կառուցումից շատ ավելի վաղ և երկրորդ՝ շումերենում ևս Լուսինը պիտի ունենար Արմա/Արմայ անվանում:

Թեև Արմավիրի հնագիտական հետազոտությունները սկսվել են դեռևս XXդ սկզբներին, սակայն քանի որ պեղումները կատարվել են երկարատև ընդմիջումներով, ապա առայժմ Արմավիրի հնագիտական պատկերն ամբողջական չէ: Ի հավելումն դրա, հնագետները մեծ հետաքրքրություն ցուցաբերելով Արմավիրի ուրարտական շերտի (Արգիշտիխինիլի) նկատմամբ, գործնականում անտեսել են հնավայրի հնագույն ստորին շերտը: Արմավիրի հնագույն բնակավայրին մի քանի էջ է նվիրված Հար. Մարտիրոսյանի «Արգիշտիխինիլի» մենագրության մեջ.¹⁹ «Վերը բերված համեմատությունները ցույց են տալիս, որ Արգիշտիխինիլի քաղաքի տարածքի հնագույն բնակավայրերը պատկանել են վաղ բրոնզի դարի սովորական բնակավայրերի շարքին, որոնք Հայաստանը ծածկում էին

¹⁷ . Մովսիսի Խորենացվոյ պատմութիւն հայոց, Բ, դ
¹⁸ . Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 22
¹⁹ . А. Мартиросян, Аргиштихинили, Ереван, 1974

համատարած ցանցով և հատկապես խիտ, Արաքսի՝ արգավանդ հովտի գլխավոր զարկերակի, ափերը: Նրանք պատկանում են նախնադարյան համայնական հասարակարգի ծաղկման ժամանակին...»:20 Միայն այսքանը:

Իրականում հեղինակը «վերը» ոչ մի համեմատություն չի անում, այլ միայն խոսքով նշում է, թե Արմավիրի հնագույն շերտում հայտնաբերված վանակատե գործիքներն ու նետազլխիկներն իրենց զուգահեռներն ունեն այլ վայրերում հայտնաբերված վաղ բրոնզի դարի նմուշներում: Փորձենք այդ համեմատությունն անել այստեղ և տեսնել, թե իսկապե՞ս




Նկար 8. ա) Վանակատե նետասլաք Արմավիրի հնագույն շերտից, բ,գ) վանակատե նետասլաքներ Արտին լեռից (նախախեցեգործական նոր քարի դար, Ք.ա. 8500-6750թթ)²¹, դ) վանակատե նետասլաքներ Մեծամորից²², է) Վանակատե նետասլաք Արմավիրի հնագույն շերտից, զ) նետասլաքներ Սատանի դարից (վերին հին քարի դար), լ) վանակատե գործիքներ Արմավիրի հնագույն շերտերից, ը) վանակատե գործիքներ Սատանի դարից (վերին հին քարի դար):

Արմավիրի ստորին շերտերից հայտնաբերված վանակատե իրերը միարժեքորեն պատկանում են վաղ բրոնզի դարին: Նկար 8ա բերված վանակատե նետասլաքը Արմավիրից է, իսկ նկար 8բ և 8գ նետասլաքները՝ Արմավիրից մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող Արտին լեռից են (Արեգունի բլուր) և պատկանում են նախախեցեգործական նոր քարի դարին, իսկ նկար 8դ-ի նետասլաքները Արմավիրի հարևանությամբ գտնվող Մեծամոր

²⁰ . А. Мартиросян, Аргиштихинили, Ереван, 1974, ст. 13
²¹ . Ս. Մարդարյան, Հայաստանը քաղաքակրթության օրրան, Երևան, 2004, նկ. 28, 29: Սույն աշխատությունից են նաև նկար 7գ,ը. տես համապատասխանաբար աղյուսակ XVIII և XVI:
²² . Է. Խանգաղյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան, Մեծամոր, Երևան, 1973, նկ. 10

բլուրից: Հիշյալ նմուշների բնութագրական պարամետրերի համեմատությունից երևում է, որ քարի մշակման տեխնիկայի տեսանկյունից Արմավիրի և Մեծամորի նետասլաքները մոտ են իրար: Սակայն սա հարցը չի լուծում, քանի որ Մեծամորի հնագույն շերտը ևս չունի ճշգրիտ թվագրում: Սա մի կողմից և մյուս կողմից թե Արմավիրի և թե Մեծամորի նետասլաքներն իրենց ձևով ու մշակման տեխնիկայով մոտ են Արեգունի բլուրի նախախեցեգործական նետասլաքներին և հնարավոր է, որ Արմավիրի և Մեծամորի վանակատե նետասլաքները ևս նախախեցեգործական նոր քարի դարի ժամանակներից են: Արմավիրի հնագույն շերտում հայտնաբերված մյուս նետասլաքը տերևաձև է (նկար 8ե): Նման նետասլաքներ են հայտնի Արտին լեռան մի այլ հնավայրից (Սատանի դար), որոնք պատկանում են վերին հին քարի դարին (նկար 8զ): Արմավիրի ու Սատանի դարի տերևաձև նետագլխիկների ընդհանրություններն ավելի ակնհայտ են:

Այս համեմատություններից կարելի է բխեցնել, որ հավանաբար Արմավիրի տարածքը բնակեցվել է վերին հին քարի դարի վերջերում, երբ Ք.ա. XII հազարամյակում սկսում է հետ քաշվել Արարատյան լիճը: Լճի ցամաքելը տևում է մի քանի հազարամյակ: Արմավիրը



Նկար 9. Լուսնային նշաններով ժայռապատկեր Արմավիրի արևելյան բլրից:


գտնվելով Արարատյան դաշտի վերնամասում, առաջինն է ազատվում ցամաքող լճի ջրերից: Քանի որ Արմավիրի բլուրը շրջակայքի համեմատ բավականին բարձր է (76մ), ապա այն երկար ժամանակ գոյություն է ունեցել որպես կղզի: Կարծում ենք հենց այդ ժամանակ է Արամիրի բլրի վրա հայտնվում առաջին մարդը: Արարատյան և Նախիջևանի դաշտավայրերը ցամաքում ու ճահճուտների են վերածվում Ք.ա. IX-VIII հազարամյակներում և սկսվում է բուն դաշտավայրային շրջանների բնակեցումը:

Այժմ անդրադառնանք Լուսնի շումերեն անվանմանը: Տեսանք, որ Լուսնի շումերական Աստծո՝ Sin անունը կապված է հայերեն սին/սուն/սան = «սնուցել» արմատի հետ: Լուսնի բուն անունը շումերենում գրվում է «օր» (𐎎 = UD) և «գրել» (𐎗𐎒 = SAR) սեպերի կցագրությամբ և ներկայացվում ud-sakar ձևով: Շումերեն ud=ut=ut=«օր» բառի հայերեն զուգահեռն է օթ = «գիշեր, երեկո, մի օրվա ճանապարհ, իջևան» բառը: Բառարաններում շումերեն ud բառի վանկագրման օրինակները ցույց են տալիս, որ այն ունեցել է նաև ur = օր ընթերցում: Այսպես, «օր ու գիշեր» արտահայտությունը գրվել է gi⁶ ud-da = mu-ši u₃ ur-ri (PBS 05, 152, pls.123-4 [OBGT I/1] xi 28'=810): Այստեղ gi⁶ = «գիշեր», որը վանկագրվել է mu-ši, որտեղ mu = «ծառ» (հմմտ. հայերեն «մով») և ունի geš/giš ընթերցում, իսկ ši = igi = «ակն, աչք» բառն է, որն ունի եր/ար ընթերցում: Արդյունքում, gi⁶ = mu-ši = giš-er = գիշեր: Շումերենում u₃-ը շաղկապ է և նույնական է հայերեն «ու» շաղկապի հետ: Շումերեն ud-da=ut-ṭa կապակցությունն ունի

«կանգառ, հանգիստ, ընդմիջում» (a stand) իմաստ և համապատասխանում է հայերեն «օթ» արմատին: Սրա ur-ri վանկագիրն էլ իմաստով ու հնչողությամբ հայերեն «ար = օր» բառն է:²³

Շումերեն sakar բառը SAR սեպի ընթերցումն է և համապատասխանում է հայերեն սակ =«հաշիվ, համարք, չափ, օրենք, կարգ» բառին,²⁴ որից sakar = սակ-ար =«հաշիվ անել, չափել, կարգել» (ար =«անել»): Այս պարագայում ud-sakar-ը բառացի նշանակել է «օրերի հաշիվ, օրերի համարք, օրերի չափ, օրերի կարգ» և արտահայտել է այն փաստը, որ ամսվա օրերի համրանքը, չափը որոշվել է Լուսնի փուլերով: Ըստ լեզվաբանների, հնդկոպական լեզուներում Լուսնի անվանման նախաձևը ևս գալիս է «չափել» գաղափարից: Նրանք վերականգնում են *mēns նախաձև, որը *mē- =«չափել» բառի աճած ձևն է:²⁵

Այժմ տեսնենք, թե Լուսնի էլ ինչ հնարավոր անուն կլինի ընթերցել UD և SAR սեպերի կցագրումից: UD սեպի հնչյունական արժեքների թվին է պատկանում ara⁷ վանկը, իսկ SAR սեպն ունի ma⁴ ընթերցում: Այս երկու վանկերի կցագրումից ստանում ենք Լուսնի UD.SAR = ara⁷ - ma⁴ = arma = Արմա/Արմայ անունը, որը ստուգաբանվում է միայն հայերենում: Հետևաբար Միջագետքում կային բոլոր նախապայմանները, որպեսզի շումերներն աստիճանաձև բուրգն ու նրա վրա կառուցած տաճարն անվանեին Արմավիր/Արմայիր:



Նկար 10. Արմավիրի պեղումների հատակագիծը: Կետգծով շրջանակի մեջ է առնված տաճարի տարածքը բլրի գագաթին:²⁶

Եթե Արմավիրի բլուրների վրա հնագետների պեղած բնակավայրը Արմայիսի հիմնած և Խորենացու հիշտակած Արմավիրն է, ապա բուն Արմավիր բլրի գագաթին պիտի լինեք Արմայ=Անահիտի պաշտամունքին նվիրված տաճար: Մովսես Խորենացին վկայում է, որ Արտաշես Ա-ն Փոքր Ասիայից Արմավիր է տեղափոխում Անահիտ=Արտեմիսի պղնձաձույլ ոսկեգոծ

արձանը. «Եւ գտեալ յԱսիայ պղնձաձոյլ ոսկեգոծ պատկերս զԱրտեմիդայ, և զՀերակլեայ և զԱպոդոնի՝ տայ բերել յաշխարհս մեր, զի կանգնեսցեն յԱրմավիր»:²⁷ Տաճարի գոյությունը հաստատվեց պեղումների արդյունքում: Հնագետների պեղած տաճարական համալիրը

²³ . Քանի որ սեպագրական u-ի միջոցով հնչեցվում են ա, ու, օ ձայնավորները, ապա հավանաբար սեպագիր u-ն նաև aw=աւ երկբարբառի արժեք ունի: Դրա վկայությունն են օրինակ՝ ար = ur-ri = «օր», քաւ = kus, գւս = «սրբացում, սուրբ, մաքուր» և այլն:

²⁴ . Կարծում ենք այս սակ =«օրենք» բառից է Մովսես Խորենացու հիշատակած Սկայորդի անունը, որը կրել է «Օրինավոր որդի» իմաստ, ունի նույն կազմությունը, ինչ և շումերական Dumu -zi = «Ճշմարիտ որդի» անձնանունը և բնավ կապ չունի «սակ» ցեղանվան հետ:


²⁵ . Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, տես «ամիս» բառահոդվածը:

²⁶ . Г.А. Тирация, Урартский Армавир (По данным археологических раскопок), Культура Востока: древность и раннее средневековье. Ленинград, 1978 г. ст.106

²⁷ . Մովսիսի Խորենացվոյ պատմութիւն հայոց, Բ, Ժբ

գրավում է Արմավիր բլրի գագաթը (նկար 10): Հիմնվելով գրավոր վկայությունների վրա հարկ է ենթադրել, որ պեղվածը հենց Մայր Աստվածուհու՝ Անահիտի տաճարն է: Կարծում ենք այդ մասին ուղղակի վկայություն է տալիս նաև պեղածո իրերից մեկը. խոսքը վերաբերում է 1985թ Արմավիրից պեղված կավե եղջերագավաթին:²⁸

Եղջերագավաթի առաջնային մասը մեծ արվեստով քանդակված երինջի գլուխ է: Երինջի վզին մանյակ է, որի մեղալիոնի փոխարեն երինջի կրծքի մասում հեղման անցքն է: Մեր խնդրի տեսանկյունից կարևորը երինջի ճակատին պատկերված երկու նշանագրերն են (տես նկար 11բ):



Նկար 11. ա) Արմավիրից պեղված երնջագլուխ եղջերագավաթի ընդհանուր տեսքը, բ) երինջի ճակատի նշանագրերը:


Երինջի բուն ճակատին պատկերված է սուր անկյունը դեպի ներքև ուղղված հավասարասրուն եռանկյունի, իսկ եռանկյունուց ներքև՝ պատկերված են գծիկով միացված երկու օղակներ: Հավանաբար եռանկյունու նշանն է նկատի ունեցել Պլուտարքոսը (46-120թթ), երբ Անահիտին նվիրված երինջների վերաբերյալ ասում է, թե նրանց ճակատին ջահաձև նշաններ էին խարանված:²⁹ Կարծում ենք այս երկու նշանագրերի միջոցով արտահայտվել է այն Աստծո անունը, ում պաշտամունքի մաս է կազմել եղջերագավաթը: Այժմ փորձենք վերծանել այդ նշանագրերը: Սկսենք եռանկյունու պատկերից: Նախ, եռանկյունին որպես նյութական առարկայի պատկեր, սեպ է, որը հայերենում ունի «երիթ» անվանում: Երկրորդ՝ եռանկյունին, որպես երկրաչափական վերացական պատկեր, կապված է երեք թվի հետ: Երկու դեպքում էլ հայերենում նրան բնութագրող բառերը («երիթ» և «երեք») սկսվում են եր/ար արմատով: Հետևաբար երինջի ճակատին պատկերված «եռանկյունի/սեպ» նշանագրին կարող ենք վերագրել ար/եր ընթերցում:

²⁸ . I. Karapetian, Rhyton á tête de taureau, Trésors l'Arménie ancienne/des origines au IV siècle/. Paris, 1996, p. 175

²⁹ . Plutarchus, Lives, Luculus, III.8-IV, 2

Այս եզրակացությունը հաստատում են նաև շումերենի տվյալները: Սուր անկյունով դեպի ցած ուղղված եռանկյունին շումերենում ևս գործածվել է որպես պատկերագիր, որից հետագայում ծագել է KAK/GAG սեպը:

Աղյուսակ 3. «Եռանկյունի» նշանագրի և KAK/GAG սեպի du₃ (tu₂₀, ru₂, ban₄) ընթերցման իմաստները շումերենում:

Շումերական նշանագիրը, նրանից ծագած շումերա-աքքադական սեպերը և ընթերցումները				Շումերական բառի իմաստները	Աքքադ.	Հայերեն արմատը	Հայերենի իմաստը
	ru ₂	արարել	<i>banū</i>	ար	արարել, ստեղծել, շինել		
	du ₃	անել	<i>epēšu</i>	ար	անել, կատարել		
	tu ₂₀	արարած, էակ	<i>binūtu</i>	ար	արարած		
	ban ₄	ուղղահայաց, կանգնած, տնկված	<i>zaqāpu</i>	ար	յառնել, կանգնել		
		բռնել, պահել	?	առ	առնել, վերցնել, իլել		
		նետի սլաք, բևեռ, սեպ	<i>sikkatu</i>	եր	երիթ, սեպ,		
		բոլոր, ամեն	<i>kalāma</i>	ար	արար-աշխարհ =ամբողջ աշխարհը		

Ինչպես երևում է աղյուսակ 3-ում բերված տվյալներից, շումերական պատկերագրի բոլոր իմաստները հայերենում ստուգաբանվում են «ար» արմատով, իմա՝ համանուններ են: Իսկ դա նշանակում է, որ ru₂ ընթերցման փոխարեն կամ նրան զուգահեռ, «եռանկյունի» պատկերագիրը պիտի ունենա հավելյալ ar/ur ընթերցում: Դրա մասին է վկայում և այն փաստը, որ ինչպես հայերեն «ար» արմատն է գործածվում կրկնությամբ (արար), շումերեն բառը ևս ունի նման գործածություն (du₃ - du₃) և կրում է «ծես, արարողություն» իմաստ: Սա նաև հայերեն «արար» բառի իմաստն է, որից՝ «արարողություն, արարողակարգ, արարողապետ» և այլն: Շումերական բառարաններից մեկում (CT 51 58-63 no. 168ii 41) DU₃ սեպանշանի դիմաց դրված է a-ra-ru վանկագրումը, որը հայերեն «արար» բառի կրկնակն է: Շումերեն պատկերագրի ընթերցումները հայերենի հետ կապող մյուս փաստն այն է, որ շումերեն պատկերագիրն ունի ban₄ ընթերցում «արարել, ստեղծել» իմաստի համար, որի աքքադերեն զուգահեռն էլ ունի banū ձև:³⁰ Սրանք կրկնակներն են բնիկ հայերեն «բան»

³⁰ . Այս դեպքը եզակի չէ: Հաճախ է պատահում, երբ հայերենում գործածվող հոմանիշ բառերից մեկը բերվում է որպես շումերեն, իսկ մյուսը՝ աքքադերեն: Օրինակ՝ kuš = կաշի (շումերեն), իսկ mašku = մաշկ (աքքադերեն):

արմատի, որի բայական ձևն է բանել =«գործել, աշխատել»: Բնիկ հայերեն «բան» և «արար» բառերը հոմանիշներ են:³¹

Շումերենում du_3 բառի կրկնությունը (du_3-du_3) «աստված» ցուցիչով օգտագործվել է որպես Մայր Աստվածուհու մականուն: Այսպես, $^d du_3 - du_3 = ^d Inanna/^d I\check{s}tar$ և $^d du_3 - du_3 = ^d Nidaba/^d Nisaba$: Այստեղ ևս հայերենն ունի իր գուգահեռը ի դեմս տուտու =«մայր, կանաց հարգալից կոչում» բառի, որը կազմված «տու» պարզ արմատի կրկնությամբ: Ավելին, հայերենն է բացատրում շումերեն բառի վերոհիշյալ գործածության իմաստը. Մայր Աստվածուհուն, որպես հարգալից դիմումի ձև, կոչել են տուտու =«մայր»:

Այս պարագայում հարց է առաջանում, թե ինչ կապ կա վերոհիշյալ ar/ur և du_3/tu_2 ընթերցումների իմաստների միջև, որ նրանք միասին հայտնվել են նույն պատկերագրի տարբերցումների ցուցակում: Այս հարցի պատասխանը ևս տալիս է հայերենը: Հայերենում «տու»-ն բազմիմաստ «տալ» բառի արմատական ձևն է: Նախ՝ այն հաճախ հանդես է գալիս որպես օժանդակ բայ և կազմում բազմաթիվ բաղադրյալ բառեր: Այս դերում «տու»-ն դառնում է «ար» արմատից կազմված «առնել» բայի հրամայական «արա» ձևի հոմանիշը: Օրինակ՝ ջուր տու=ջուր արա, կրակ տու=կրակ արա, պատիվ տու=պատիվ արա, տեղ տու=տեղ արա և այլն: Երկրորդ՝ «տալ» բառի «բուսցնել, արտադրել, արդյունաբերել» իմաստները նրան մերձեցնում են «ար» արմատին, քանի որ վերջինիս կրկնական «արար» ձևն ունի «երկրագործություն, բերք, արդյունք» իմաստներ:


Ամփոփելով, կարող ենք ասել, որ «եռանկյունի» նշանագրի հնչյունական արժեքն է «ար/եր», իսկ գաղափարագիր ընթերցումն ու իմաստը Ար =«աստված, ստեղծող, արարիչ»:³² Այս բացահայտումը մեզ համար շատ օգտակար է այն առումով, որ Մայր Աստվածուհու

³¹ . Ընդ որում, հայերենում համանուն են բան =«խոսք», բան =«իր, առարկա, նյութ» և բան =«գործելը, աշխատելը» բառերը և միայն նման համանունների շարք ունեցող լեզվի մեջ կարող էր ստեղծվել այն դիցաբանական պատկերացումը, որ արարչական ակտերը կատարվել են խոսքի գործությամբ: Շումերենն ունի $inim$ =«բառ, խոսք» և $inim$ =«(աշխատանքին անհրաժեշտ) նյութ, մատերիա» համանունները, որոնք հիշեցնում են հայերեն բարբառային անըմ =«անուն» և անըմ եմ =«անում եմ» ձևերը:

³² . Այս առումով տեղին է հիշատակել Բագրատունյաց մայրաքաղաք Անիի հովազապատկեր կրող դարպասին կից աշտարակի վարդագույն տուֆի ֆոնի վրա սև տուֆի շարվածքով գծագրված նշանները: Վերևից առաջինը աջից ձախ պտույտ ունեցող կեռիսաչ է, որից մի փոքր ցած հավասարակողմ եռանկյունու պատկեր է (տես նկարը, որում նաև պարզորոշ երևում են թուրք ջարդարարների հրացաններից նշանների վրա արձակված գնդակների հետքերը: Այս հետքերն ապացուցում են, որ թուրքը ոչ միայն մարդաստրատեգ է, այլ նաև մշակույթ չստեղծող և ուրիշի մշակույթն ատող է: Քրիստոնեական մարդասիրությունն ասում է, որ խղճալ է պետք նման ազգին, քանի որ հատուցումը շուտով ու շատ դաժան է լինելու):

անուններից «ար» վանկով են սկսվում միայն Արմեն/Արմին և Արմա/Արմայ անունները: Հետևաբար Արմավիրի եղջերագավաթի երկրորդ նշանագիրը ենթադրաբար պիտի ունենա «մեն/մին/ման» կամ «մա/մայ» ընթերցում:

«Եռանկյունի» նշանագիրը ևս գալիս է Սյունիքի ժայռապատկերների ժամանակներից, թեև այնտեղ սակավ է գործածվում: Այն բրոնզեդարյան խեցեղենի վրա պատկերվող ամենատարածված նշաններից է: Այնուհետև այն երևում է գծային գրերում, ուրարտական շրջանի կնիքների ու խեցեղենի վրա:³³



Երկու պատկերներից ներքև աշտարակի լուսամուտ-դիտանոցն է, որը ևս երիզված է սև տուֆով: Սև տուֆի այդ երիզն իր ելուստներով հուշում է, որ այն կապգրություն է և, ինչպես կտեսնենք քիչ անց, գաղտնագրված է «որդի» բառը: «Որդի» բառը պատկանում է մոտ մի տասնյակ բառերի այն շարքին, որոնք ունեցել են կապգրության միատեսակ ավանդական ձև (ՄԻ) (տես Ա. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 190): Աշտարակը կառուցող վարպետն այս կապգրության էլեմենտները վերարտադրել է մի պատկերի մեջ: Կապգրությունը սովորաբար ընթերցվում է ձախից աջ և վերից վար հերթականությամբ: Հետևելով այս կանոնին, ցույց տանք «որդի» բառի ընթերցումը հիշյալ կապգրության մեջ (այս գաղափարը հուշեց Մ. , որի համար հայտնում եմ իմ շնորհակալությունը):




Անհայտ է մնում ձախից ստորին մասի ելուստների (՚) իմաստը:

Ելնելով այս փաստից, կարող ենք ասել, որ Անիի աշտարակի վրա պատկերվել է քրիստոնեական հավատի հիմքը՝ Սուրբ Երրորդությունը. կեռիսաչը խորհրդանշել է Հայր Աստծուն, եռանկյունին Սուրբ Հոգուն, իմա՝ Մայր Աստվածուհուն և ինչպես տեսանք, պատուհանը երիզագծող սև տուֆի շարվածքով կապգրվել է երրորդ անձի անունը՝ Որդի: Այս փաստը մեզ ևս մի կարևոր եզրակացության է հանգեցնում. «Եռանկյունի» նշանագիրն իր Ար = Աստված ընթերցմամբ գործածվել է որպես Սուրբ Հոգու (= Մայր Աստվածուհու) կրճատ անվանաձև:

³³ . Ուրարտական խեցեղենի վրա «եռանկյունի» նշանագիրը դրվում է թվային նշաններից հետո


(𐎠𐎡, 𐎠𐎢, 𐎠𐎣), գործածվել է որպես չափի միավորի գաղափարագիր և ընթերցումն անհայտ է: Այս գաղափարագրի համար հնարավոր ենք համարում «ար» վանկով սկսվող «արդու» ընթերցում: Հայերենում «արդու» գործածվել է որպես ծավալի միավոր (72 քսեստ կամ 29 օխա) և Հին Կտակարանի թարգմանության մեջ գործածված է 11 անգամ: Ըստ Հ. Հյուբշմանի, այն փոխառություն է հին պարսկերենից, թեև բառը իրանական լեզուներում ոչ մի անգամ վկայված չէ և ավանդել են միայն հույն մատենագիրները (‘αρθρος): Հ. Աճառյանը բերելով Հ. Հյուբշմանի տեսակետը, տարակուսում է, որ փոխառության դեպքում սպասելի էր արտա մ ձևը (տես՝ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, «արդու» բառահոդվածը):



Նկար 12. «Եռանկյունի» նշանագրի գործածության նմուշներ. ա, բ) Սյունիքի ժայռապատկերներ, գ, դ) ժայռագրեր Մեծամորից (առաջին պատկերում «եռանկյունի» նշանագիրը պատկերված է «արմեն/արմին» նշանագրի հետ), ե, զ) գծային գրերով գրություններ Քուչակից, է) ուրարտական կնիք Բաստամից:

Այսպիսով կարող ենք փաստել, որ Հայաստանի տարածքում «եռանկյունի» նշանագրի անընդհատ գործածությունը ժայռապատկերներից մինչև Արմավիրի եղջերագավաթը:

Այժմ անդրադառնանք երինջի ճակատի երկրորդ նշանագրին (ծ): Այս նշանագրի գործածությունը ևս գալիս է Սյունիքի ժայռապատկերների ժամանակներից: Այն առկա է նաև Արագածի (Կաքավաբերդ, Ագարակ), Վասպուրականի, Կորդուքի ժայռապատկերներում:³⁴



Նկար 13. ծ - նշանագրի օրինակներ Հայաստանի ժայռապատկերներում. ա, բ) Սյունիք, գ) Վասպուրական (Կանգվար, Դարբնացքար), դ) Կորդուք (Թախտ ի Մելիք):

Ինչպես նախորդ նշանագիրը, սա ևս ժայռապատկերների տարիքն ունի և հանդիպում է Հայաստանի տարբեր անկյուններում: Ինչպես արդեն նշել ենք, այս նշանագիրը ենթադրաբար պիտի ունենա «մեն/մին/ման» կամ «մա/մալ» ընթերցում:

Նշանագրի տեսքն ու նրա ենթադրյալ իմաստները մեզ ուղղորդում են դեպի շումերական MAN գաղափարագիրը: Նախ այս գաղափարագիրն ունի մեզ անհրաժեշտ բոլոր ընթերցումները. man, mens, mins; Եվ երկրորդ՝ նրա պատկերագիրը բաղկացած է երկու շրջանագծերից.

Աղյուսակ 4. MAN պատկերագրի ձևափոխումը սեպագրի

MAN պատկերագրի ենթադրյալ նախաձևեր	MAN պատկերագրի միջանկյալ տեսքը	MAN պատկերագիրը 90° պտույտից հետո	MAN սեպագիրը

³⁴ . Մ. Հովհաննիսյան, Ագարակի ժայռափորագրությունները, ԼՀԳ, 1984, էջ 70

MAN պատկերագրի նախաձևը վկայված չէ և մենք ենթադրում ենք, որ նախաձևի մեջ երկու շրջանագծերը գծիկով միացած են եղել: Մեր ենթադրությունը բխում է MAN գաղափարագրի հետևյալ իմաստներից.

- man, mens, min³ = «եղբայր» (աքքադ. athū),
- = «երկուսը միասին, երկուսն էլ» (աքքադ. kilallān),
- = «երկվորյակ» (աքքադ. mašū),
- = «ընկեր, գործընկեր» (աքքադ. tappū),
- = «երկու» (աքքադ. šina):

«Աստված» ցուցիչով MAN սեպն արտահայտել է Արևի Աստծո անունը: Թեև դեռ չի հաջողվել գտնել հայերեն համապատասխան համանունները, սակայն շումերեն բառի իմաստները ցույց են տալիս մի կացություն, որում երկուսը, որպես մի ամբողջի հավասար կեսեր, հանդես են գալիս միության կամ հակադրության հիմքի վրա միացած վիճակում («երկուսը միասին», «երկվորյակ», «ընկեր»):

Հայկական նշանագրերի համակարգում ունենք երկու շրջանագծերը գծիկով միացված նշանագիր (𐎎), որը Արմավիրի եղջերագավաթի նշանագրի կրկնակն է և սրան վերագրվում է «հակադրություն» իմաստ: Այսպիսով, հայկական նշանագիրը մի կողմից իր գծագրությամբ նույնական է եղջերագավաթի նշանագրի հետ և մյուս կողմից, իր իմաստով հաստատում է շումերական MAN պատկերագրի վերոհիշյալ իմաստներն ու ընթերցումները:³⁵

Արդյունքում, Արմավիրի եղջերագավաթի պատկերագիր արձանագրության համար կունենանք հետևյալ ընթերցումը.

$$\nabla \text{𐎎} = \text{Ար} - \text{մեն/մին/ման} = \text{Արմեն/Արմին/Արման}$$

Քանի որ հնագետները Արմավիրի եղջերագավաթը թվագրում են Ք.ա. VI-V դդ, ապա մեր վերծանությունը վկայում է, որ Արմեն/Արմին/Արման դիցանունը, որպես Լուսնի


³⁵. Մյունխի ժայռապատկերներում ունենք մի նշանագիր, որը հավանաբար այս բոլորի նախաձևն է:

Այն պատկերում է պարանով իրար կապած երկու քարաբեկոր (𐎎), որը կարծում ենք քար արձակելու զենքի՝ պարսի նախնական ձևն է: Բարակ պարանով իրար կապած քարերից մեկը բռնելով արագ պտտել են երկրորդ քարը և նրան հաղորդել մեծ կենտրոնախույս ուժ: Բաց թողնելով բռնած քարը, երկու քարերը միասին սլացել են դեպի թիրախը և, ի տարբերություն պասատիկով պարսի, որում մի քար էր դրվում, թիրախին հասցվել է կրկնակի հարված: Լեզվաբանները «պարս» բառը կապում են պահլավերեն՝ pars = «կապ, կապիչ» չվկայված, ենթադրյալ ձևի հետ: Իրականում այն ծագում է հայերեն պար = «շուրջ, շրջան, պտույտ» բառից, քանի որ զենքի բուն էությունը հիմնված է պտույտի վրա: Նույն կերպ դրան համանուն պարս = «մայր փեթակից բաժանված մեղունների խումբը» բառը ծագում է նույն «պար» արմատից, քանի որ մեղունները փեթակից դուրս թռչելով երկար ժամանակ պտտվում են նրա շուրջը: Հայերենում «պար» բառին հոմանիշ է ման = «շրջան, ոլորք, պտույտ» բառը և հնարավոր է Մյունխի ժայռապատկերներում պատկերված պարսը ունենեցել է մի այլ անուն՝ կազմված հոմանիշ «ման» արմատով, որը և դարձել է քննարկվող նշանագրի man, mens, min³ ընթերցման պատճառ: Այս ընթերցումներով Արևի Աստծո անունը գրելու փաստը ևս վկայություն է ման = «պտույտ, շրջան» գաղափարի հետ կապի օգտին:

Աստվածուհու և Մայր Աստվածուհու անուն, գործածական է եղել Սյունիքի ժայռապատկերների փորագրման ժամանակաշրջանից մինչև առնվազն այդ ժամանակները: Երկրորդ եզրակացությունն այն է, որ Արմավիրի բլրի տաճարը նվիրված է եղել Մայր Աստվածուհու պաշտամունքին:

Վերադառնանք Լուսնի Աստվածուհու Արմա/Արմայ անվանաձևին և անդրադառնանք այս դիցանվան մի խորհրդանշանի ևս: Հին աշխարհի պատմության և մասնավորապես պատկերագրության տեսանկյունից հետաքրքիր երևույթ է արմավենու սրբացումը և պատկերագրության մեջ հաճախակի գործածությունը: Նյութականի տեսանկյունից խնդիրը բացատրելի է. քանի որ արմավենին մարդուն տալիս է արժեքավոր ու առատ սնունդ, կացարան ու կահ-կարասի պատրաստելու հնարավորություն: Արմավենու ամեն ինչը (պտուղ, կորիզ, փայտանյութ, տերև) մարդու տնտեսության մեջ անմնացորդ կիրառություն ուներ: Գիտնականներն ընդունում են այս տեսակետը: Մակայն արդյո՞ք դա է արմավենու սրբացման իրական պատճառը:

Հայերենում «արմ» արմատն են պարունակում նաև արմալ = «արմավ պտուղը», արմալենի = «արմավի ծառ», արմալ = արմ հալ = «փյունիկ թռչունը», արմալ/արմհալ = արմ հալ = «ցեղի նախնի» բառերը: Հետևաբար եթե «արմ» նշանագրից (արմունկ) կամ «մահիկ» նշանագրեր) հետո դնենք պտուղի, ծառի, թռչնի, մարդու պատկերներ, ապա նույն նշանը կարող ենք նաև համապատասխանաբար ընթերցել «արմավ», «արմավենի», «փյունիկ թռչուն», «ցեղի նախնի»: Սյուս կողմից, քանի որ արմավենու պատկերն առարկայական է, ապա նրա միջոցով կարող ենք գաղափարագրել Արմա = Լուսին/Լուսնի Աստվածուհի և արմալ/արմհալ = արմ հալ = «ցեղի նախնի» վերացական իմաստներ կրող բառերը: Մենք հիմա պիտի փորձենք հիմնավորել, որ արմավենու սրբացման իրական պատճառը պատկերագրության մեջ այդ տարբերակներից մեկի գործածությունն է: Մեր հետազոտությունը սկսենք Ք.ա. III-II հազարամյակների միջագետքյան կնիքների քննությամբ:



Նկար 14. Արմավենին միջագետքյան կնիքների վրա:

Բերված կնիքների կարևոր առանձնահատկությունն այն է, որ արնավենու պատկերին կից Մայր Աստվածուհին է, իսկ շատ օրինակներում դրանց է գումարվում նաև Լուսնի մահիկի և թռչնի պատկերները: Թռչնապատկերն ի դեմս աղավնու, հետագայում՝ քրիստոնեական պատկերագրության մեջ, դառնում է Սուրբ Հոգու խորհրդանիշը: Դրա մասին կխոսենք մի այլ առիթով, իսկ այժմ տեսնենք, թե ինչ կապ կարող է լինել արնավենու և Մայր Աստվածուհու միջև:

Նախ բերենք մի բացատրություն, որը հիմնված է արնավենու, թռչնի և Լուսնի էությունների արտաքին նկարագրության մեջ գոյություն ունեցող ընդհանրության վրա: Խոսքը վերաբերում է հետևյալ ընդհանրություններին.

ա. Մեռած, չորացած արնավենու արմատները պահպանում են իրենց կետունակությունը, որոնցից բուսնում են նոր ընձյուղներ ու վերակենդանացնում արնավենուն: Արնավենու այս կարևոր կենսական առանձնահատկությունը հայերենում արտահայտված է նրա «արմալ» անվանման մեջ: Դիմելով ներքին ստուգաբանության հնարավորություններին, «արմալ»-ը, որպես բարդ բառ, մասնատենք «արմ» և «հալ» մասերի: Սրանցից արմ = «արմատ» բառն է, իսկ «հալ» բառն ունի «սկիզբ սկզբնավորություն» իմաստ, որից՝ հալանալ = «սկզբնավորվել, սկսել»: Հետևաբար «արմալ» անվանումը հայերենում ունի տառացի «արմատից սկզբնավորվող» իմաստ:³⁶

բ. Թռչնի պարագայում ունենք արմալ = «առասպելական փյունիկ թռչունը» անվանումը: Ըստ մեզ հասած առասպելների, փյունիկ թռչունը վերստին հարություն է առնում ինքնաբոցավառումից հետո մնացած մոխրից: Այստեղ գործ ունենք ինքնավերարտադրման նույն զարմանահրաշ էրևույթի հետ և հայերեն անվանման իմաստն արտահայտում է հենց այդ անբացատրելի հրաշքի նկատմամբ ծագող բնական զարմանքը: Թռչնի անվանումը բարդված է արմ = «զարմանք» և հալ = «թռչուն» պարզ արմատներից և կրում է «զարմանալի թռչուն» տառացի իմաստը:

գ. Նույն կերպ մեկամայա պարբերաշրջանի ընթացքում ծերացած (Տատ) նվագող Լուսինը հանգչում է (աներևույթանում է, անհետանում է, հեռանում է, սուզվում է Ստորերկրյա Աշխարհ և այլն): Մոտ երկու օր անց, անհետացած Տատ Լուսինը վերադառնում է որպես ծնելու պոտենցիա կրող Կույս (նորածին Լուսին): Այդ

³⁶ . Մի այլ տարբերակն է «արմալ»-ը մասնատել «արմ» և «ալ(ն)» մասերի, որոնցից վերջինս կրում է «ունենալ, ունեցվածք, սեփականություն, հարստություն» իմաստ: Այս պարագայում «արմալ» անվանումը ստանում է «արմատով հարուստ, արմատ ունեցող» իմաստ, որը նույնպես արտահայտում է արնավենու վերը նշված առանձնահատկությունը:


պահից մոտ մի շաբաթ անց Լուսինը ստանձնում է սնուցող մոր կարգավիճակը (Մայր) և այդ կարգավիճակում մնում մոտ երկու շաբաթ (կիսալուսին-լիալուսին-կիսալուսին փուլերը): Մի ամսվա ընթացքում կատարվող Լուսնի այս կերպարանափոխությունները ևս իրենց մեջ կրում են ինքնավերարտադրման խորհուրդը³⁷ և այդ առանձնահատկության պատճառով Լուսնին կարող ենք արմավենու և փյունիկ թռչունի հետ դասել նույն շարքում:

Սակայն էությունների այս ընդհանրությունը չի պարտադրում Լուսնի Աստվածուհու պատկերին կցել արմավենու պատկեր: Դա կարող էր արվել միայն այն դեպքում, եթե Լուսնի Աստվածուհին կրեր ինքնավերարտադրման խորհուրդը բնորոշող և «արմա» բառին



Նկար 15. Բարձրաքանդակի դրվագ միջին էլամական շրջանի ծիսական ջրավազանի պատին, արմավենու և այծեղջյուրի պատկերներով:


համանուն մի անվանում: Վերը բերված կնիքների տվյալները հենց ցուցում են, որ արմավենու պատկերի միջոցով գաղափարագրվել և հնչեցվել է Լուսնի Աստվածուհու ինչ որ բնութագիր կամ մականուն, որն անհրաժեշտաբար պիտի համանուն լինի «արմա» բառին: Ի հավելումն հիշյալ կնիքների, նկար 15-ում բերված է միջին էլամական շրջանի (Ք.ա. 1500-1100թթ) մի բարձրաքանդակի դրվագ, որի վրա արմավենու բնի աջ և ձախ կողմերից պատկերված են Ինաննա դիցուհու

անվան գաղափարագիրը (): Արմավենուց աջ այծեղջյուրի պատկերն է՝ Հայ Աստծո անվան գաղափարագիրը:

Այս պարագայում լուծումը միակն է. Լուսնի Աստվածուհին արմավենու և փյունիկ թռչունի հետ կրել է համանուն Արմա անվանում: Սակայն այս Արմա անունն արդեն նախորդներից տարբեր իմաստ ունի: Այն նորից մասնատենք «արմ» և «հաւ» մասերի, բայց արդեն արմ = «ցեղ, տոհմ, ազգ» և հաւ = «նախնի» իմաստներով: Արդյունքում Լուսնի Աստվածուհու Արմա անվան համար բացահայտում ենք «ցեղի նախնի» իմաստ:

³⁷ . Արարչական գործունեության պարբերականությունն ապահովելու, աշխարհակարգը պահպանելու անհրաժեշտությամբ է պայմանավորված տարբեր դեմքերով ու էություններով Աստծո ինքնադրսևորումը, ինչպես նաև՝ հեռանալն ու վերադարձը: Սա չի կարելի շփոթել մեռնող-հարություն առնող Աստծո գաղափարի հետ, որը շատ ավելի ուշ շրջանում (Ք.ա. II հազ.) տրված մեկնաբանություն է և առավելապես տարածված է սեմական աշխարհում: Տուրք տալով այս վերջին տեսակետին, մի շարք անվանի հայագետներ (Հ. Մատիկյան, Ն. Ադոնց, Մ. Աբեդյան, Գ. Ղափանցյան) Արա Գեղեցիկին հոչակել են մեռնող-հարություն առնող աստվածություն: Հայոց դիցաբանության մեջ մեռնող Աստծո գաղափար չի եղել: Հին աշխարհում տարածված էր հեռացող-վերադարձող Աստծո գաղափարը (շումերական Դումուզի, իսթական Տելեպիոնու, հնդարիական Ագնի և այլն), որը կապված էր Արեգակի շարժման օրական և տարեկան պարբերականության , Լուսնի միամսյա պարբերաշրջանի և դրանցով պայմանավորված բուսական աշխարհի գարնանային զարթոնքի հետ:

Ցեղի ներսում ծնվող ամեն մի մանուկ համարվում էր Մայր Աստվածուհուց պարզև և Մայր Աստվածուհին (Ninhursag) կրում էր «բոլոր մանուկների մայր» տիտղոսը: Դա հետևանք էր այն փաստի, որ դեռ հին քարի դարում մարդը բացահայտել էր Լուսնի ամսական պարբերաշրջանի, կնոջ դաշտանի և հղիանալու կապը: Հետևաբար կար պատկերացում, թե ցեղի ինքնավերարտադրման խորհուրդը աստվածային ծագում ունի և ակունքը Լուսնի Աստվածուհին է՝ Մայր Աստվածուհին: Արդյունքում, Լուսնի Աստվածուհու Արմա/Արմհա = Ցեղի Նախնի անվանումն իր իմաստով դառնում է այդ Աստվածուհու «արմ»-«մեն» = Արմեն = Ցեղի Մայր անվան հոմանիշը: Այժմ փորձենք այս ամենի հաստատումն ու ակունքները գտնել Հայաստանի ժայռապատկերներում: Մեր ձեռքի տակ եղած տվյալներում հաջողվեց գտնել արմավենու միայն երեք պատկեր, որոնցից երկուսը Սյունիքի ժայռապատկերներում, մյուսը՝ Մոկաց աշխարհի (Տիրիծին)³⁸:



Նկար 16. Արմավենու պատկերազրույթ. ա) Սյունիքի ժայռապատկերներում, բ) Տիրիծինի ժայռապատկերներում (Մոկք), գ) ուրարտական կնիք Բաստամից:

Ինչպես երևում է նկար 16ա-ից, Սյունիքի ժայռապատկերների երկու արմավենիներին կցագրված է արմեն/արմին նշանագիրը: Նույն պատկերը տեսնում ենք ուրարտական կնիքի վրա (նկար 16գ): Այստեղ ևս արմավենու պատկերից աջ դրված է արմեն/արմին նշանագիրը: Ակնհայտ է, որ այս կցագրությունները պիտի ընթերցվեն Արմա Արմեն: Այս ընթերցման մեկնությունը երկակի է, քանի որ Արմեն անվան համար ունենք արմ-մեն «ցեղի մայր» և ար-մեն «աստվածամայր»: Այս երկակիությունից ազատվում և Արմեն անվան իմաստը ճշգրտում ենք Արմա = «ցեղի նախնի» իմաստի օգնությամբ: Ելնելով այն իրողությունից, որ Արմեն «ցեղի մայր» և Արմա = «ցեղի նախնի» իմաստները գործնականում

³⁸ . M. Uyanik, *Petroglyphs of south-eastern Anatolia, Graz-Austria, 1974, fig. 80*


Հեղինակը նույն ժայռապատկերի լուսանկարը բերում է նկար 1-ում (տես ստորև) որպես Տիրիծինի ժայռապատկեր:



Այնուհետև նույն ժայռապատկերից մի դրվագ (տես նկար 16բ) ներկայացնում է նկար 80-ում և այն անվանում հայտնաբերված Թախտ ի մելիքից (Կորդուք):

կրկնում են իրար, ապա Արմեն անվան համար նախընտրելի է դառնում «աստվածամայր» իմաստը (Ար = Աստված, մեն = մայր): Հետևաբար Արմաւ Արմեն ընթերցումը հաղոդում է «ցեղի նախնի Աստվածամայր» տառացի իմաստը:

Այն փաստը, որ Արմաւ դիցանվան գործածությունը վերին հին քարի դարից հասել է մինչև Ուրարտու, վկայում է հազարամյակների ընթացքում Աստվածամոր պաշտամունքի ավանդական հզորության մասին: Փաստերի մի այլ խումբ հնարավորություն է տալիս պարզել, որ Արմաւը եղել է Անահիտ Աստվածամոր՝ ցեղի նախնու մականանունը: Նախ վերը պարզեցինք, որ Արմեն և Անահիտ անունները նույն դիցուհու՝ Աստվածամոր տարբեր անուններն են: Հետևաբար Աստվածամոր Արմաւ «ցեղի նախնի» բնութագիրը կարող էր գործածվել նաև Անահիտ անվանաձևի հետ: Սակայն այս հարցում մեզ համար կարևոր է մի այլ փաստ: Ստորև (նկար 17ա, 17բ) շումերական երկու կնիքների վրա պատկերված է Ինաննան իր դարպասների առջև:



Նկար 17. ա, բ) Ք.ա. III հազարամյակի շումերական կնիքներ, գ) խեցեղեն բարձրաքանդակի բեկոր (Ք.ա. XXVդ), դ) Ք.ա. XXIIդ շումերական բարձրաքանդակ:

Ինչպես բերված նկարներում, այնպես էլ միջագետքյան շատ այլ կնիքների վրա Ինաննայի դարպասները արմավենու ճյուղերով զարդարված են պատկերվում: Հաջորդ պատկերում (նկար 17գ) նույնպես Ինաննան է, ում աջ ձեռքում և խույրի վրա արմավենու ճյուղեր են: Հաջորդը շումերական բարձրաքանդակի բեկոր է, որի վրա պատկերված է Լագաշ քաղաքի առաջնորդ Գուդեան (Ք.ա. XXIIդ), ով երկու աստվածությունների առաջնորդությամբ պաշտամունք են մատուցում ինչ որ Աստծո: Գուդեան աջ ձեռքում բռնել է այդ Աստծուն նվիրաբերվելիք արմավենու ճյուղը:

Այստեղ արդեն պահն է հիշելու Ագաթանգեղոսի վկայությունը. «...պսակս և թաւ ոստս ծառոց նուէրս տարցի բագնին Անահտական պատկերին»:³⁹

Պահն է փաստելու, որ Անահիտին թավ ճյուղեր նվիրաբերելու ծիսական ավանդույթը գալիս է հազարամյակների խորքից և, ինչպես նրա Արմեն անունն ու Արմաւ մականունը, կայուն պահպանվել ու անընդհատ գործածվել է հազարավոր տարիների

³⁹ . Ագաթանգեղայ պատմութիւն հայոց, 49

ընթացքում: Դժվար թե աշխարհի մի այլ անկյունում գտնվի զարմանք ու հիացմունք առաջացնող նման երկարատև ու անխախտ պաշտամունքային ավանդապահություն, ինչպիսին Մայր Աստվածուհու պաշտամունքն է Հայաստանում՝ հայոց մեջ:

Իսկ ո՞րն է Մայր Աստվածուհուն թավ ճյուղեր նվիրաբերելու խորհուրդը, ի՞նչ հիմքի վրա է ծագել այդ ծեսը: Հարցի պատասխանը նորից պիտի փնտրենք հայերենի գանձարանում: Հայցելով Ագաթանգեղոսի ներողամտությունը, մի փոքր խմբագրենք վերը բերված հատվածը. «...պսակս և թաւ ոստս **մայրի** նուէրս տարցի բագնին Անահտական պատկերին»: Ինչպէս նկատեցիք, ծառոց =«ծառերի» բառը փոխարինեցինք հոմանիշ «մայր» բառով, որը հայերենում ունի «ծառ, անտառ» իմաստ և համանուն է մայր =«մայր, մայրիկ» բառին:

Ծառի թավ ճյուղն ամբողջական ծառի խորհրդանիշն: Երբ մեկը ծառի թավ ճյուղ է նվիրաբերում Մայր Աստվածուհուն, ապա դրանով նա ուղերձ է հղում Աստվածուհուն, որ ինքը նրան ճանաչում ու ընդունում է որպէս Մայր: Անշուշտ այս խորհուրդն իմացողը հիշյալ հատվածում «ծառ» բառի փոխարեն կգրեր «մայր»: Հավանաբար այս ծեսի խորհուրդը հայտնի էր միայն քրմական բարձր դասին և դրանից անտեղյակ Ագաթանգեղոսը կարող էր իր միտքն արտահայտել ավելի գործածական «ծառ» բառի միջոցով, քանի որ նա տալիս էր ոչ թե ծեսի խորհուրդը, այլ՝ նկարագրությունը:


Այս մեկնաբանությունը նաև հնարավորություն է տալիս գնահատել ծեսի մոտավոր հնությունը: Թավ ճյուղի նվիրաբերման ծեսն առարկայական է (ոչ թե պատկերի կամ խոսքի, այլ առարկայի միջոցով է կազմվում ուղերձը): Ուղերձի բուն իմաստն առարկայի անվանումն է (մայր =«ծառ»), որի միջոցով հաղորդվում է համանուն և վերացական իմաստ կրող բառ (մայր =«մայր, մայրիկ»): Հետևաբար պիտի կարծել, որ այս և նման ծեսերը հավանաբար ծագել են պատկերագիր ուղերձներից (ժայռապատկերներ) առաջ և հանդիսանում են համանունության կիրառման հնագույն օրինակները:

Հայոց մեջ Մայր Աստվածուհու պաշտամունքի անխախտ ավանդապահության օրինակ է արմավենու պատկերագրության պահպանումը քրիստոնեության շրջանում: Այն նույն ժամանակ, երբ Ագաթանգեղոսը գրում էր, թե «Ապա ինքն իսկ թագավորն խաղայր գնայր ամենայն զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ՝ երթայ յԱրտաշատ քաղաք, աւերել անդ զբագինսն Անահտական դիցն, և որ յԵրագամոյն տեղիսն անուանեալ կայր»⁴⁰,

⁴⁰ . Հայագիտությունը ոչ միայն պատշաճ ուշադրություն չի դարձրել, այլ կարելի է ասել այք է փակել Ագաթանգեղոսի և Հովհան Մամիկոնյանի հաղորդած այն տվյալների վրա, թե ս. Գրիգոր Լուսավորիչն ավերել ու ոչնչացրել է հին կրոնի բոլոր հետքերը (տաճարներ, արձաններ, մատյաններ և այլն): Արդյո՞ք Լուսավորիչն ավերում էր հին հավատին առնչվող ամեն ինչ, թե՞ միայն սրբում էր զրադաշտական ու հելենական ազդեցություններից: Հնարավոր է, որ Ս. Գրիգոր Լուսավորիչը սաստիկ ավերածություններ արեց ու գործած մեղքերը գիտակցելով գնաց Մանյա Այրք ապաշխարելու:

Հայաստանում ծնվում էր նորաստեղծ մշակույթ՝ խաչքարերի մշակույթը, որպես հնի վերածնունդ նոր ձևի մեջ և նոր միջավայրին համապատասխան:

Սկսած հնագույն խաչքարերից, արմավենու պատկերը, կամ ինչպես ընդունված է մասնագիտական գրականության մեջ, արմավենիկի զարդամոտիվը տարածված երևույթ էր խաչքարերի մշակույթում (տես նկար 18):⁴¹



Նկար 18. Արմավենիկի զարդանախշով միջնադարյան խաչքարեր:

Բերված բոլոր պատկերներում խաչքարի ստորին մասից աջ ու ձախ տարածվող արմավենիկների մեջտեղից վեր է բարձրանում խաչը: Արմավենիկների այս դիրքը շեշտում է, որ նրանք կրում են սկիզբ (=հաւ) և նախնի (=հաւ) լինելու գաղափարը: Խաչի պատկերն ավարտվում է արմավի գույգ ողկույզներով, որով խաչը դառնում է պտղաբերող ծառ (արմավենի): Մայր Աստվածուհու հետ կապը կրկնակի է շեշտվում, երբ գույգ արմավենիկներին կից պատկերվում են գույգ աղավնիներ (Սուրբ Հոգի) (տես նկար 18-ի վերջին պատկերը): Քրիստոնեական շրջանի հայկական մշակույթում, բացի խաչքարերից,

Կեսարիայի եպիսկոպոս Ղևոնդը ս. Գրիգոր Լուսավորչին ուղարկած նամակում նրան համարում է առաքյալներ Բարդուղիմեոսի ու Թադևոսի հետնորդը և գրում. «...հիշի՛ր, որ տերը նրանց շինելու համար կոչեց և ոչ թե քանդելու» (Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Երևան, 1989, էջ 22): Սա ի՞նչ է, նախատինք, թե՞ զգուշացում: Որքանո՞վ են հավաստի ավերածությունների մասին Ագաթանգեղոսի հրաշապատում աշխատության տվյալները:


Այս թեմայի շարունակությունն ու հայագիտության կողմից անտեսված ու առեղծված մնացած մյուս խնդիրը Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ն է: Եզնիկ վարդապետը խիստ քննադատելով ու հերքելով գրադաշտական ու հունա-հռոմեական դավանանքների հիմունքները, ոչ մի խոսքով չի անդրադառնում հայոց նախաքրիստոնեական հավատին: Հիշատակում ու հերքում է պարսիկների ու հույների բոլոր հայտնի աստվածների պաշտամունքները, սակայն չի հիշատակում հայոց ոչ մի դիցանուն: Հայտնի է, որ Մայր Աստվածուհու դեռևս կային հին կրոնի շատ հետնորդներ: Որեմն ինչու՞ Եզնիկը քրիստոնեական դավանանքի ջատագովն ու ուսյալ վարդապետը, չի անդրադառնում հայոց հին կրոնին որպես աղանդի ու հերքում այն: Կան հիմնավոր փաստեր, որոնք ցուցում են, թե պատճառն այն է, որ պարզապես ձեռացած ծիրանենու մատղաշ շիվը պատվաստվեց ջահել տունկի վրա. դա հազարամյակների խորքից եկող Մայր Աստվածուհու ու նրա Որդու պաշտամունքի նորոգումն էր, որին կանոնադրանանք հետո:

Մի բան ակնհայտ է, որ Մայր Աստվածածնի պաշտամունքը քրիստոնեական Հայաստանում ավելի հզորացավ: Նրան նվիրաբերվեցին Հայաստանում կառուցված եկեղեցիների գերակշռող մեծամասնությունը, բոլոր եկեղեցիների խորանները և այդ խորանները Ծառագարդի տոնին միշտ զարդարվում են թավ ճյուղերով:

⁴¹ . Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, խմբ. Բ. Առաքելյան, Երևան, 1984, էջ 31

արմավենիկը տարածված զարդամոտիվ է նաև մանրանկարչության, ճարտարապետության, գորգագործության մեջ:

Եթե իմի բերենք վերն ասվածը, ապա կարող ենք փաստել, որ Հայաստանի տարածքում Լուսնի պաշտամունքի գաղափարագիր վկայությունը հասնում է վերին հին քարի դար և վկայված է Սյունիքի ժայռապատկերներում: Սյունիքի ժայռապատկերներում Աստվածուհու անունը հայերենի համանունների հիման վրա գաղափարագրվել է այժի գույգ եղջյուրներից կազմված մահիկի և արմավենու պատկերներով, որոնցով հնչեցվել են նրա Արմ/Արմա =«կերակրող, սնուցող» և Արմաւ/Արմայ =«ցեղի նախնի» մականունները: Աստվածուհու անունները գաղափարագրող նշանագրերի (եղջյուր, մահիկ, արմավենիկ) գործածությունը անընդհատ շարունակվել է վերին հին քարի դարից մինչև մեր օրերը:

Աստվածուհու պաշտամունքը և հիշյալ մականունները հետագայում տարածվել են Առաջավոր Ասիայում (Շումեր, Եգիպտոս, իեթեր և այլն): Ելնելով հողվածը չճանրաբեռնելու և ծավալը չկրկնապատկելու մտահոգությունից, Սյունիքի ժայռապատկերների տվյալները համեմատեցինք միայն շումերական տվյալների հետ: Միայն նշենք, որ Սյունիքի ժայռապատկերների հետ նույն առնչություններն են դրսևորում նաև եգիպտական մշակույթի ու եգիպտերենի տվյալները: Բերենք միայն մի ցայտուն օրինակ. Լուսնի մահիկի (աճող Լուսին) անվանումը եգիպտերենում գաղափարագրվում է արմունկ պատկերող հիերոգլիֆով (), որի համար եգիպտագետները վերականգնում են a=ա ընթերցում (arm=արմ արմատի առաջին հնչյունը):

Համլետ Մարտիրոսյան

հեռ. 35-00-28

091-07-12-03

e-mail hmart@yerphi.am